

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
2019թ. փետրվարի 12-ի նիստի

Խորհրդի 40 անդամներից ներկա էին -ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Գիտական հաղորդում (զեկ.՝ Քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ Ա.Վարդապետյան):

2. Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հաշվետվությունը ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա.Վաղարշյան):

3. 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքի և արդյունքների ամփոփում:

4. Պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները մագիստրոսական թեզերի պաշտպանության ընթացքի և արդյունքների մասին:

5. Անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորում:

6. Ղեկավար նշանակվելու թույլտվություն ստացած գիտությունների թեկնածուների ցուցակը համալրելու միջնորդությամբ ԲՈԿ դիմելու հարցը:

7. Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Վ.Գևորգյանին դոցենտի գիտամանկավարժական կոչում շնորհելու մրցույթին մասնակցության երաշխավորության հարց:

8. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Զ.Վարդանյանին դոցենտի գիտամանկավարժական կոչում շնորհելու մրցույթին մասնակցության երաշխավորության հարց:

9. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ. Գիտական հաղորդում (զեկ.՝ Քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ Ա.Վարդապետյան):

Քրեական ամբիոնի դոցենտ Ա.Վարդապետյանը հանդես եկավ գիտական հաղորդմամբ անցումային արդարադատության հիմնախնդիրների վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Հարությունյանը, պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, պրոֆ. Տ.Բարսեղյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը, դոց. Ա.Ղազինյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն (հաղորդումը կցվում է):

2. ԼՍԵՑԻՆ. Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հաշվետվությունը ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա.Վաղարշյան):

Պրոֆ. Ա.Վաղարշյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց հաշվետու

շամանակահատվածում ամբիոնի ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշտվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

3. ԼՍԵՑԻՆ. 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքի և արդյունքների ամփոփում:

Պրոֆ. Հ.Խաչիկյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց 2018-2019 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ընթացքի և արդյունքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

4. ԼՍԵՑԻՆ. Պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները մագիստրոսական թեզերի պաշտպանության ընթացքի և արդյունքների մասին:

Պետական քննական հանձնաժողովների նախագահները ներկայացրեցին ամփոփիչ հաշվետվություններ մագիստրոսական թեզերի պաշտպանության ընթացքի և արդյունքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումերն ընդունել ի գիտություն (հաշվետվությունները կցվում են):

5. ԼՍԵՑԻՆ. Անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոց. Ս.Մեղրյանը, պրոֆ. Ն.Այվազյանը, պրոֆ. Տ.Բարսեղյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Հ.Խաչիկյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը՝ որպես անվանական կրթաթոշակի թեկնածուներ՝ երաշխավորել հետևյալ անձանց.

1. Մկրտչյան Պետիկ Վահանի (մագիստրատուրա, 1-ին տարի) Մխիթար Գոշի անվան կրթաթոշակ.

2. Զիլավյան Հրանտ Կամոյի (մագիստրատուրա, 1-ին տարի)՝ Գրիգոր Զոհրապի անվան կրթաթոշակ.

3. Զաբաղյան Սամվել Դավդի (մագիստրատուրա, 1-ին տարի)՝ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի սահմանած Վլադիկ Ներսեսյանցի անվան կրթաթոշակ.

4. Մելիքսեթյան Կարեն Արտակի (մագիստրատուրա, 1-ին տարի)՝ Յուրի Ղամբարյանի անվան կրթաթոշակ:

6. Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Վ.Գևորգյանին դոցենտի գիտամանկավարժական կոչում շնորհելու մրցույթին մասնակցության երաշխավորության հարց:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտամանկավարժական կոչում շնորհելու համար ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց Պետության և իրավունքի տեսության ու

պատմության ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Վաղարշյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն քվեարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Վ.Գևորգյանին շնորհել դոցենտի գիտամանկավարժական կոչում:

7. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Ք.Վարդանյանին դոցենտի գիտամանկավարժական կոչում շնորհելու մրցութին մասնակցության երաշխավորության հարց:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտամանկավարժական կոչում շնորհելու համար ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ստեփանյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն քվեարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Ք.Վարդանյանին շնորհել դոցենտի գիտամանկավարժական կոչում:

8. Ղեկավար նշանակվելու թույլտվություն ստացած գիտությունների թեկնածուների ցուցակը համալրելու միջնորդությամբ ԲՈԿ դիմելու հարցը:

8.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Վլադիմիր Վարդանյանին թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու իրավունք տրամադրելու միջնորդությամբ ԲՈԿ դիմելու հարցը (բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.06-Միջազգային իրավունք):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Դիմել ԲՈԿ՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Վլադիմիր Վարդանյանին թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու իրավունք տրամադրելու միջնորդությամբ:

8.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Գրիգոր Բեքմեզյանին թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու իրավունք տրամադրելու միջնորդությամբ ԲՈԿ դիմելու հարցը (բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03-Մասնավոր իրավունք):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ա.Հայկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Դիմել ԲՈԿ՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Գրիգոր Բեքմեզյանին թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու իրավունք տրամադրելու միջնորդությամբ:

8.3 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Սերգեյ Մարաբյանին թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու իրավունք տրամադրելու միջնորդությամբ ԲՈԿ դիմելու հարցը (բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04-Դատական իրավունք):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Դիմել ԲՈԿ՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Սերգեյ Մարաբյանին թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու իրավունք տրամադրելու միջնորդությամբ:

8.4 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Դավիթ Խաչատրյանին թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու իրավունք տրամադրելու միջնորդությամբ ԲՈԿ դիմելու հարցը (բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04-Դատական իրավունք):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Դիմել ԲՈԿ՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Դավիթ Խաչատրյանին թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու իրավունք տրամադրելու միջնորդությամբ:

8.5 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Դավիթ Ավետիսյանին թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու իրավունք տրամադրելու միջնորդությամբ ԲՈԿ դիմելու հարցը (բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04-Դատական իրավունք):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Դիմել ԲՈԿ՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Դավիթ Ավետսիյանին թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու իրավունք տրամադրելու միջնորդությամբ:

8.6 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Դավիթ Մելքոնյանին թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու իրավունք տրամադրելու միջնորդությամբ ԲՈԿ դիմելու հարցը (բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04-Դատական իրավունք):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Դիմել ԲՈԿ՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Դավիթ Մելքոնյանին թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու իրավունք տրամադրելու միջնորդությամբ:

8.7 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Անահիտ Մանասյանին թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու իրավունք տրամադրելու միջնորդությամբ ԲՈԿ դիմելու հարցը (բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.02-Հանրային իրավունք):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Վ.Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Դիմել ԲՈԿ՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Անահիտ Մանասյանին թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու իրավունք տրամադրելու միջնորդությամբ:

9. Ընթացիկ հարցեր

9.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հայցորդ Նարինե Կարապետյանի գիտական ղեկավարին փոխելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հայցորդ Նարինե Կարապետյանի գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոցենտ Վ.Քոչարյանին:

Բ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

9.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ Սահմանադրական ամբիոնի դոցենտ Ա.Մանասյանի՝ «Սահմանադրական կայունությունը՝ որպես կայուն ժողովրդավարության կարևորագույն գրավական» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ «Սահմանադրական կայունությունը՝ որպես կայուն

ժողովրդավարության կարևորագույն գրավական» վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության

9.3 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ Սիրո Ամիրխանյանի գիտական ղեկավարին փոխելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ Սիրո Ամիրխանյանի գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ Ա.Հայկյանցին:

Բ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

9.4 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Գևորգ Վիրաբյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ.Ա.Վաղարշյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի ասպիրանտ Գևորգ Վիրաբյանի՝ «Իրավական կանխավարկածների ճյուղային մոտեցումների միասնականացման ընդհանուր տեսության հայեցակարգը/հիմնախնդրի լուծման մեթոդաբանությունը և հիմնադրույթները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն ու պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆեսոր Ա.Վաղարշյանին.

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

9.5 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Քրիստինե Ալեքսանյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ն.Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ Քրիստինե Ալեքսանյանի՝ «Վարչարարության համաչափությունը մարդու իրավունքների երաշխավորման համատեքստում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Դանիելյանին.

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

9.6 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Անահիտ Գալստյանի ատենախոսության

թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ն.Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ Անահիտ Գալստյանի՝ «Տեղական ինքնակառավարման համակարգում Երևանի կարգավիճակի առանձնահատկությունները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոց. Վ.Այվազյանին.

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

9.7 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Գոռ Բակլաչյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Վ.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ Գոռ Բակլաչյանի՝ «Աշխատաժամանակի իրավական կարգավորումը ՀՀ-ում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 - «Դատական իրավունք»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Վ.Հովհաննիսյանին.

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Սուջան

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի

2017-18 ուս. տարում կատարած ուսումնամեթոդական և

գիտահետազոտական աշխատանքների մասին

1. Ուսումնական և մեթոդական աշխատանքներ

1. Ուսումնական և մեթոդական աշխատանքները կազմակերպվել են ուսումնական պլանին և Համալսարանի ու ֆակուլտետի դեկանատի պահանջներին համապատասխան:

Կրեդիտային համակարգով ուսումնական ուղեցույցին համապատասխան կատարվել են ընթացիկ ստուգումների, ընթացիկ և եզրափակիչ քննությունները ֆակուլտետի խորհրդի հաստատած կարգին համապատասխան:

2. Ամբիոնի կողմից դասավանդվող առարկաների հիմնական մասի ընթացիկ ստուգումներն ու քննությունները իրականացվել են հիմնախնդիրային գրավոր հանձնարարությունների միջոցով: Բոլոր առարկաներով հնարավոր չի եղել դասնել՝ պայմանավորված ամբիոնի առարկաների բովանդակային առանձնահատկությամբ, այն է տեսապատմական ուղղվածությունը: Արդեն երեք ուսումնական տարի նույնիսկ բակալավրիատի 1-ին կուրսում արտասահմանյան երկների պետության և իրավունքի պատմություն առարկայից քննական առաջադրանքները կառուցվել են կոմբինացված՝ խնդիրներով, համեմատական վերլուծական հանձնարարությունների միջոցով:

3. Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ուսումնական ծանրաբեռնվածությունը ներառում է համալսարանի բոլոր ֆակուլտետներում իրավունքի հիմունքներ դասընթացի դասավանդումը: Ամբիոնի դասախոսները այլ ֆակուլտետներում դասավանդում են նաև՝ ‘Պետության և իրավունքի տեսություն’, ‘Քաղաքական և իրավական ուսմունքների պատմություն’ և այլ առարկաներ: Հաշվետու շրջանում, և՛ կարգապահության, և՛ դասավանդման առիթով որևէ բողոք չի եղել: Այստեղ ունենք հաջողություն այն առումով, որ իրավունքի հիմունքների դասընթացը դարձավ համապարտադիր:

4. Բակալավրիատում հաշվետու ուսումնական տարում դասավանդվում է Իրավաբանական տեխնիկա գուտ գործնական դասընթացը, պետության և իրավունքի տեսության հիմնախնդիրներ դասընթացի փոխարեն:

5. **Մագիստրոսական ծրագրերի** հետ կապված կարող ենք արձանագրել, որ 2017-18 ուսումնական տարվանից գործողության մեջ մտավ նոր մագիստրական ծրագիր, որի մոդուլների մեծ մասը նոր դասընթացներ են, որոնք չեն կրկնում բակալավրի ծրագրի առարկաներին: Նոր ծրագրում նախատեսել ենք և 2017-2018 ուս. տարվա 1-ին կիսամյակից դասավանդել ենք 6 լրիվ նոր դասընթացներ: Նոր առարկաներից են՝ հետազոտության պլանավորում և մեթոդներ, իրավունքի տեսության արդի հիմնախնդիրները, կոռուպցիայի դեմ պայքարի իրավական հիմնախնդիրները, իրավական մարդաբանություն և այլն:

4. Հեռակա բաժնում ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման ուղղված քայլեր:

- Դասավանդումը և դրա մեթոդական ապահովումը կատարվում է նույն կերպ, ինչ առկա համակարգում:
- Հետադարձ կապի ապահովման համար ամեն երկուշաբթի 14:30-ին նշանակված են կոնսուլտացիայի օրեր, որոնց ուսանողները հաճախում են հազվադեպ:
- Գործընթացի արդյունավետության ապահովման գլխավոր քայլը ընդունելության որակի ապահովումն է կամ հեռակա ձևով կրթության վերացումը:

2. Աշխատանքը ուսանողների հետ

1. Հաշվետու տարում կազմակերպվել է ամբիոնի գծով ուսանողական գիտական զեկուցումների 2 նստաշրջան՝ 1-ին կիսամյակում 4-րդ կուրսի ուսանողների մասնակցությամբ՝ քաղաքական և իրավական ուսմունքների պատմություն առարկայից, և 2-րդ կիսամյակում բակալավրատի 1-ին կուրսի ուսանողների մասնակցությամբ /դասախոս՝ Վ. Օհանյան/: Էսեներ են պատրաստել մոտ 50 ուսանող:

2. Արդեն 4-րդ տարին է, որ 1-ին կուրսի ուսանողների շրջանում ամցկացվել է երկու ստեղծագործական շարադրությունների մրցույթ՝ 1-ին կիսամյակում Իմ երազած պետությունը՝ թեմայով, իսկ 2-րդ կիսամյակում՝ Եթե ես ունենայի իրավական

կարգավորման կախարդական փայտիկ՝ թեմայով /դասախոս կազմակերպիչ Ա. Վաղարշյան/: Մասնակցել են գրեթե բոլոր ուսանողները և գրում են բավականին հետաքրքիր շարադրություններ:

Տ. Միմոնյանի նախաձեռնությամբ 4-րդ կուրսի ուսանողների հետ Քաղ. և իրավ. ուսմունքների շրջանակներում անցկացվել է «Հայկյան իրավակարգ – 2050» քննարկում /2017 թ. նոյեմբերին/:

2017թ. նոյեմբերի 17-ին կազմակերպվել է իրավագիտության ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանողների այցը ՀՀ Ազգային ժողով /կազմակերպիչ Կ. Ամիրյան/:

2017 թ. նոյ. 22-ին և 23-ին կազմակերպվել է իրավագիտության ֆակուլտետի տարբեր կուրսերի ուսանողների այցը ՀՀ Սահմանադրական դատարան /կազմակերպիչ Կ. Ամիրյան/:

2017 թ. դեկտեմբերի 6-ին պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի և իրավագիտության ֆակուլտետի ուսանողական խորհրդի աջակցությամբ 1-ին կուրսում կազմակերպվել է դատախազ-մրցույթ «Արտասահմանյան երկրների պետության եւ իրավունքի պատմություն» առարկայի շրջանակներում /կազմակերպիչ Կ. Ամիրյան/:

3. Գիտահետազոտական աշխատանքներ Ամբիոնի գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ամփոփ տվյալները

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
0	2	1	0	24	8

1. Մենագրություն

1. **Ա.Գ. Վաղարշյան՝** համահեղինակությամբ, Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանադրական կենսագործման ներկա վիճակը (գիտագործնական մեկնաբանություններ), Երևան, Տիգրան Մեծ, 2017, էջեր 6-110, 304 էջ:

2. **Ն.Գ. Դավթյան,** Իրավունքի կենսագործում, Երևան, Հայրապետ, 2017, 144 էջ:

Ուսումնական ձեռնարկ

1. **Տ.Վ. Միմոնյան,** «Հասարակագիտություն» ուսումնական ձեռնարկ, 11-րդ դասարանի համար, Կոնրադ Ադենհաուեր հիմնադրամ, ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն, Երևան, 2017, օգոստոս-սեպտեմբեր, համահեղինակ, Գլուխ 1 և 2, :

2. Հոդված

1. **Ա. Վաղարշյան**, Հայաստանի առաջին հանրապետության պետաիրավական համակարգի գործառնությունների փորձը և արդի հանրապետության կատարելագործման հայեցակարգային առաջարկներ: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ: Երևան, 2018, ԵՊՀ, 1(1)2018, էջ 7-21:
2. **Ա. Վաղարշյան**, Իրավունքի կրառում հասկացության հիմնահարցերը: Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, Երևան, 2017 № 2 (23), էջ 3-17:
3. **Ա. Վաղարշյան**, Մարդու իրավունքների ու ազատությունների կենսագործման և սահմանափակման սահմանադրական նորամուծությունները (համակարգային և ձևական իրավական վերլուծություն): Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, Երևան, 2017 № 3 (24), էջ 3-16:
4. **Ա. Վաղարշյան**, Հայաստանի Հանրապետության անվտանգության հայեցակարգի իրավական կարգավորման ու կառավարման հիմնահարցերը 1990-1995 թթ.: Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, Երևան, 2018 № 1 (25), էջ 3-13:
5. **Ա. Վաղարշյան**, Պետության կառավարման ձևը և նրա պաշտպանության ու անվտանգության պրոբլեմը, Հայկական բանակ, Երևան, 2018, թիվ 2(88) էջ 45-53:
6. **Вагаршян А.Г.**, Рецепция судебных уставов Алесандра 2 в Первой республике Армения (1918-1920 гг.): Коллизия демократического законодательства и чрезвычайной ситуации. Северо-кавказский юридический вестник. хгхгхг <http://vestnik.uriu.ranepa.ru/magazine/2017/4-2017/>, 2017, 4-2017, ст. 27-34.
7. **Վ. Գարապետյան**, Կրոնական ազատության ապահովման հիմնախնդիրն Իսրայելի պետությունում: Պետություն և իրավունք, թիվ 2-3 (76-77), 2017, 115-119 էջեր:
8. **Տ.Վ. Միմոնյան**, «Իրավաբանի գործնական մարտահրավերները XXI դարում. արհեստական բանականություն», ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի ամենամյա գիտաժողովի հոդվածների ժողովածու, Երևան, 2018, էջ 34-45:
9. **Վ. Ա. Օհանյան**, Իրավունքի կենսագործման հիմնախնդիրների լուծման միջճյուղային և ինտեգրալ մոտեցումները իրավունքի տեսությունում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ; գլխ. խմբ.՝ Գ. Ս. Ղազիխյան, Երևան, ԵՊՀ, 2018, էջ 21-33:
10. **Վ.Վ. Գևորգյան**, К вопросу о механизме власти как о структурном элементе политической системы общества, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ; գլխ. խմբ.՝ Գ. Ս. Ղազիխյան, Երևան, ԵՊՀ, 2018, էջ 46-57:
11. **Ամիրջյան Կ.**, «Գործադիր իշխանության հանրային-իրավական պատասխանատվությունն իշխանությունների բաժանման համատեքստում», Արդարադատություն, դեկտեմբեր 6 (41), 2017, 35-41 էջեր:
12. **Կարեն Ամիրջյան**, ՀՀ վճռաբեկ դատարանի կարգավիճակը և գործունեության արդյունավետության բարձրացման վերաբերյալ որոշ նկատառումներ, ԼՂՀ դատական իշխանություն, 2017, թիվ 2 (24), 21-26 էջեր,
13. **Կարեն Ամիրջյան**, Պետական իշխանության և պաշտոնատար անձանց հանրային-իրավական պատասխանատվությունը սոցիալական պատասխանատվության համատեքստում, Օրինականություն (ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես), N 101, 2017, 50-54 էջեր:
14. **Կարեն Ամիրջյան**, «Պետական իշխանության հանրային-իրավական պատասխանատվության դրական եւ նեգատիվ դրսեւորումները», Պետություն և իրավունք, թիվ 2-3 (76-77), Եր., 2017, 105-112 էջեր:
15. **Ամիրջյան Կ.**, «Գործադիր իշխանության հանրային-իրավական պատասխանատվությունն իշխանությունների բաժանման համատեքստում», Արդարադատություն, դեկտեմբեր 6 (41), 2017, 35-41 էջեր:
16. **Ամիրջյան Կ.**, «ՀՀ Վճռաբեկ դատարանի տեղը եւ դերը հանրային-իրավական պատասխանատվության սկզբունքի իրացման համատեքստում», Պետություն և իրավունք, թիվ 1 (75), Եր., 2017, 21-29 էջեր:

17. **Ամիրջյան Կ.**, Օրենսդիր իշխանության հանրային իրավական պատասխանատվությունը, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2017թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, 1(1)2018, ԵՊՀ հրատ., Երևան, 2018, 16-27 էջեր:
18. **Karen Amiryan**, The Relations Between the Constitutional Court and the National Assembly of the Republic of Armenia in the Context of the New Constitutional Regulations, South Caucasus Law Journal (Constitutional Reforms in South Caucasian Countries), 2017, 08/2017, P. 99-102, 256-259, Germany:
19. **Ն.Գ. Դավթյան**, Իրավունքի ձևականացման (դրական իրավունքի վերածման) իրավական կառուցակարգը և դրա փուլերը, Պետություն և իրավունք, թիվ 1(79), Երևան, 2018, էջ 5-19:
20. **Հ.Ա. Հարությունյան**, «ՀՀ պետական կառավարման ձևի էվոլյուցիան ՀՀ սահմանադրական բարեփոխումների լույսի ներքո», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան, 2018, թիվ 1 (1), էջեր 28-41:
21. **Հ.Ա. Հարությունյան**, «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության հիմնարար արժեքները, գործոնները և իրավական հիմքերը», Դատական իշխանություն, Երևան, 2018, թիվ 3-4 (225-226), էջեր 10-17:
22. **Հ.Ա. Հարությունյան**, «Պետական կառավարման ձևը որպես ազգային անվտանգության հիմնախնդիր», Օրինականություն, Երևան, 2018, թիվ 105, էջեր 34-40:
23. **Հ.Ա. Հարությունյան**, «Սահմանադրական բարեփոխումները՝ որպես կառավարման ձևի անվտանգության իրավական ապահովման արդյունավետության բարձրացման միջոց», Դատական իշխանություն, Երևան, 2018, թիվ 5-6 (227-228), էջեր 28-33:
24. **Հ.Ա. Հարությունյան**, «ՀՀ պետական կառավարման ձևի 2005 թվականի մոդելը և դրա վտանգները», Այլընտրանք, Երևան, 2018, թիվ 2 (ապրիլ-հունիս), էջեր 66-73:

3. Գիտական կոնֆերանսների զեկուցումներ

1. **Ա.Գ. Վաղարշյան**, «Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման նախադրյալները», զեկուցում Հայաստանի Հանրապետությունը և Հայ եկեղեցու դերակատարությունը հայոց պետության կայացման գործում (1918-2018), գիտաժողովում, 22 մայիսի 2018թ., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին (կազմակերպիչներ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան մատենադարան» և ՀՀ սփյուռքի նախարարություն):
2. **Ա.Գ. Վաղարշյան**, «Հայաստանի առաջին հանրապետության իրավական դասերը» (Բ. բաժանմունք, Հայաստանի առաջին հանրապետության պետաիրավական կառուցվածքը և ներքին դրությունը), Միջազգային գիտաժողով «Հայաստանի Հանրապետություն-100» (կազմակերպիչներ՝ ՀՀ սփյուռքի նախարարություն, ՀՀ ԳԱԱ, ԵՊՀ), մայիս 25-26, 2018 թ., Երևան:
3. **Ա.Գ. Վաղարշյան**, «Հայաստանի առաջին հանրապետության պետաիրավական համակարգի գործառնությունների փորձը և արդի հանրապետության կատարելագործման հայեցակարգային առաջարկներ»: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողով, ԵՊՀ: Երևան, 7 դեկտեմբեր, 2018:
4. **Տ.Վ. Միմոնյան**, «Իրավաբանի գործնական մարտահրավերները XXI դարում. արհեստական բանականություն», ԵՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ամենամյա գիտաժողով, 2017, դեկտեմբեր:
5. **Տ.Վ. Միմոնյան**, «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրները», «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» միջազգային գիտաժողով, Արցախ, Ստեփանակերտ, 2017, սեպտեմբերի 14-17:
6. **Տ.Վ. Միմոնյան**, «Հայ-թուրքական փակ սահմանների իրավական հիմնախնդիրները միջազգային տնտեսական համագործակցության ընթացիկ ձևաչափերում», միջազգային գիտաժողով «Գաղութների սահմանների խնդիրները միջազգային իրավունքում», Լիլի համալսարան, Ֆրանսիա, դեկտեմբեր 3:

7. **Karen Amiryan**, Nature of relations between the Constitutional Court and Legislative authority in the Republic of Armenia, International conference, Evolution of constitutional control in Europe: lessons learned and new challenges, Kishinev, 2-3 march 2017, 149-155 էջեր:

8. **Կարեն Ամիրյան**, Օրենսդիր իշխանության հանրային իրավական պատասխանատվությունը: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2017թ. նստաշրջան, դեկտեմբերի 7, 2017թ.:

Ամբիոնի անդամներ Ա. Վաղարշյանը, Տ. Սիմոնյանը, Կարեն Ամիրյանը զեկուցումներով մասնակցություն են ունեցել հանրապետական և միջազգային գիտաժողովներում տարաբնույթ թեմաներով:

4. Գիտամանկավարժական կադրերի պատրաստում և վերապատրաստում

Հաշվետու շրջանում ամբիոնի հաստիքներն են՝ 11 դասախոս /Ալեքսանյան Ալվարդ, Գևորգյան Հասմիկ, Գևորգյան Վահե, Դավթյան Նարինե, Հովսեփյան Գևորգ, Մարտիրոսյան Հայկ, Կարապետյան Արշակ, Սիմոնյան Տարոն, Օհանյան Վիկտորիա, Ամիրյան Կարեն: Համատեղողներ են եղել Օհանյան Վիկտորիան: Դասավանդել է նաև ասպիրանտ Հ. Հարությունյանը: Ամբիոնի լաբորանտ էր՝ Հայարփի Մուրադյանը:

Ամբիոնի դասախոսների հիմնական մասը բացի համալսարանից աշխատում են նաև պետական կառույցներում և մասնավոր կազմակերպություններում:

Ներկայումս ունենք 1 հեռակա ասպիրանտ և 1 հայցորդ: Երկարաժամկետ կտրվածքով նայելու դեպքում նկատում ենք ամբիոնի կազմի նորացում գրեթե 80 տոկոսով: Հեռանկարային իմաստով ամբիոնի կազմը երևի թե կայուն է:

Իրավագիտության ֆակուլտետի վերապատրաստման ներկայացված հիմնական կազմի քանակը կազմել է 30 դասախոս: Նրանցից անհրաժեշտ կրեդիտների քանակը հավաքել են միայն 18-ը: Այսպիսով 12-ը համարվում են վերապատրաստում չանցած: Պետության և իրավունքի տեսության ու պատմության 6 վերապատրաստվող դասախոսներից անցումային կրեդիտներ հավաքել են 4-ը: 2-ը՝ Կարապետյան Արշակը և Գևորգյան Վահեն չունեն համապատասխան կրեդիտների քանակը: Ներկա փուլում մասնակցում ենք վերապատրաստման նոր փուլին: Ամբիոններից ըստ կուտակված կրեդիտների քանակի 1-ին տեղում է Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնը՝ 263 միավոր:

Պաշտպանություններ

Ամբիոնի հեռակա ասպիրանտներ՝ Կարեն Ամիրջյանը 2017 թ. դեկտեմբերի 19-ին, Վ Կարապետյանը՝ 2018 թ. մարտին պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ, իսկ առկա ասպիրանտ Ն. Հարությունյանը 2018 հուլիսին:

5. ԶՄՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՐԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԻՄԻՆԱԿԱՆ ԿՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

ԶՄՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՐԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԻՄԻՆԱԿԱՆ ԿՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ԵՎ ԳՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ԵՎ ԳՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ԵՎ ԳՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ԵՎ ԳՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ԵՎ ԳՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ:

Ամբիոնը 2017 թ. -ից աշխատում է Շվեդիայի Լինկոլնի գի համալսարանի դասախոս Հերբերտ Ջակոբսոնի հետ գրանտային ծրագրի մշակման ու ներկայացման վրա, որի արդյունքում մոտ օրերս տեղի կունենա փոխայցելություն Շվեդիա բանակցելու և համագործակցության ծրագիր մշակելու համար:

Ամբիոնի երիտասարդ դասախոսները միաժամանակ աշխատում են պրակտիկ իրավաբաններ զանազան ոլորտներում /փորձագետներ, ծրագրերի ղեկավարներ և այլն/: Ամբիոնի անդամները դասախոսել են նաև այլ կազմակերպություններում. Ա. Վաղարշյանը՝ Գևորգյան հոգևոր ճեմարանում, Ա. Ալեքսանյանը՝ Երևանի դատական փորձագիտության և հոգեբանության ինստիտուտում, Տ. Սիմոնյանը՝ Հայ-Ֆրանսիական համալսարանում:

Ա. Վաղարշյանը մասնակցել է Իրավագիտություն մասնագիտությամբ որակավորման շրջանակների մշակման աշխատանքներին: Ամբիոնի վարիչը 2017-18 ուսումնական տարվա երկու կիսամյակներին էլ մեկական շաբաթ այցելել է Արցախի պետական համալսարան՝ դասավանդելու իրավագիտության ամբիոնում:

Ամբիոնի դասախոս՝ Կարեն Ամիրջյանը մասնակցել է հետևյալ միջազգայնումներին:

1. 2017 թ. օգոստոսի 31-ին մասնակցել եմ Եվրոպայի Խորհրդի հայաստանյան գրասենյակում տեղի ունեցած «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեփոխության ամրապնդում եւ կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի շրջանակներում կազմակերպված քննարկմանը:

2. 2017թ. հոկտեմբերի 19-20-ին ՀՀ Սահմանադրական դատարանի, «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով), Նոր ժողովրդավարության երկրների սահմանադրական վերահսկողության մարմինների

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

*«ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» ԾՐԱԳՐՈՎ
2018-2019թթ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Մագիստրոսական թեզերի պաշտպանություն:

2019թ. փետրվարի 1-ին տեղի ունեցավ «Իրավունքի տեսություն և սահմանադրական իրավունք» ծրագրով մագիստրոսական թեզերի պաշտպանությունը:

Պաշտպանության ներկայացվեց 16 մագիստրոսական թեզ, որոնցից 5 ուսանող ստացավ «գերազանց» գնահատական, 2 ուսանող լավ՝ գնահատական, 9 ուսանող՝ «բավարար» գնահատական:

Ընդհանուր բնույթի եզրահանգումներ:

Պետական քննական հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվել են իրավագիտության ֆակուլտետի դեկանատի կողմից նախատեսված ժամանակացույցին համապատասխան:

Մագիստրոսական թեզերի պաշտպանությունն իրականացվել է հրապարակայնորեն՝ նախատեսված նորմատիվ պահանջների պահպանմամբ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի և պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի կողմից մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության ժամանակ հաշվի են առնվել իրավական մտքի արդի զարգացումները և այն մարտահրավերները, որոնց իրավական կարգավորումները ժամանակակից հասարակական հարաբերությունների կանոնակարգման տեսանկյունից ունեն առաջնահերթ նշանակություն:

Թեև առկա էին առանձին աշխատանքներ, որոնք աչքի էին ընկնում իրենց որակով և հեղինակների կողմից նյութի տիրապետման և ներկայացման աստիճանով, սակայն թեզերի մեծամասնությունն ուներ սոսկ ճանաչողական, նկարագրական բնույթ, աշխատանքի շրջանակներում վերհանված չէին թեմային առնչվող առկա խնդիրներն ու առաջարկված չէին դրանց համար համապատասխան լուծումներ, հետևաբար, բացակայում էր իրականացված հետազոտության գործնական նշանակությունը, որպիսի հանգամանքները ցանկացած գիտական աշխատանքի

առանցքն են հանդիսանում: Կարծում եմ, որ նշված խնդիրներն առաջիկայում ունեն հաղթահարման անհրաժեշտություն՝ առաջին հերթին գիտական աշխատանքներին ներկայացվող չափանիշների վերախմաստավորման և աշխատանքների ներկայացման հմտությունների զարգացման տեսանկյունից, և պետք է անընդհատ գտնվեն ամբիոնների ուշադրության կենտրոնում:

Աշխատանքների մեծամասնությունում վերլուծված էր սուկ հայկական և ռուսական գրականություն, մի շարք դեպքերում գրականությունը բավականին հնացած էր, իսկ առանձին աշխատանքների պարագայում բացակայում էր համարժեք **գիտական** գրականության վերլուծությունը: Ուստի, կարևոր ենք համարում նաև համարժեք գիտական գրականության ընտրությունն ու դրա պատշաճ վերլուծության մեթոդաբանության վերախմաստավորումը:

Թեզերի մեծամասնությունն իրականացված էր աշխատանքներին ներկայացվող ձևական պահանջների պահպանմամբ: Միննույն ժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ աշխատանքի՝ պահանջվող բովանդակային մասերի վերնագրերի առկայությունը չէ, որ վկայում է պահանջների պահպանվածության մասին: Անհրաժեշտ է համապատասխան մասերի բովանդակությունը շարադրել՝ դրանց ենթադրյալ համատեքստին համապատասխան: Օրինակ՝ աշխատանքի նպատակին և խնդիրներին առնչվող հատվածը չի կարող վերաբերել զուտ թեմայի նկարագրությանը, կամ թեմայի արդիականությանն առնչվող հատվածը պետք է ուղղված լինի հեղինակի կողմից թեմայի արդիականության հիմնավորումներին և ոչ այլ տեղեկատվության մատուցման:

Աշխատանքների առնչությամբ ներկայացված գրախոսականների մեծամասնությունը ևս կատարված էին պատշաճ մակարդակով:

Կարծում եմ, որ անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել նաև ուսանողների մոտ վերլուծական մտածողության և նյութը ներկայացնելու հմտությունների զարգացմանը: Այդ առումով առաջնահերթ նշանակություն ունի կարծրատիպային և մեխանիկական մտածողության հաղթահարումը, ինչը երբեմն նկատելի է ուսանողների մոտ: Դասագրքում կամ ձեռքի տակ եղած իրավական ակտում ներկայացված գաղափարների մեխանիկական վերարտադրությունը չի կարող գիտելիքի գնահատման և գիտական հետազոտության իրականացման առանցքային չափանիշ հանդիսանալ: Ավելին, դասագիրքն էլ ուսանողի կողմից չպետք է դիտարկվի որպես հիմնախնդրին ծանոթանալու միակ աղբյուր: Հետևաբար, գիտական հետազոտության իրականացման ու հետազայում դրա գնահատման հիմնական չափանիշը պետք է լինի ոչ թե կարդացածի անգիր ու մեխանիկական վերարտադրությունը, այլ կատարված գիտական հետազոտության որակն ու այն ներկայացնելու հմտությունները:

Պետական քննական հանձնաժողովի նախագահ,
Արդարադատության սկադեմիայի պրոռեկտոր,
Ի.գ.թ., դոցենտ
11.02.2019թ.

Ա. Մանասյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի առկա և հեռակա ուսուցման բաժինների՝ «Քրեական իրավունք և դատավարություն» և «Կրիմինալոգիա» մագիստրոսական ծրագրերի 2018-2019 ուսումնական տարվա շրջանավարտների մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների վերաբերյալ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի առկա և հեռակա ուսուցման բաժինների «Քրեական իրավունք և դատավարություն», ինչպես նաև «Կրիմինալոգիա» մագիստրոսական ծրագրերի 2018-2019 ուսումնական տարվա ընդհանուր թվով **38** շրջանավարտների մագիստրոսական թեզերի ա/թ հունվարի 29-31-ը կայացած պաշտպանությունների արդյունքները վկայում են ընդհանուր առմամբ շրջանավարտների պատշաճ պատրաստվածության մասին:

Ասվածը հիմնավորվում է նաև ստորև ներկայացվող ցուցանիշներով.

ԱՌԿԱ	Ուսանող	գերազ. (18-20)	լավ (13-17)	բավ. (8-12)	անբավ. (0-8)	չներկ.
Քրեական իրավունք	4	1	3	—	—	—
Քրեական դատավարություն	5	1	4	—	—	—
Ընդամենը	9	2	7	—	—	—

ՀԵՌԱԿԱ	Ուսանող	գերազ. (18-20)	լավ (13-17)	բավ. (8-12)	անբավ. (0-8)	չներկ.
Քրեական իրավունք	11	1	5	5	—	—
Քրեական դատավարություն	9	1	4	4	—	—
Ընդամենը	20	2	9	9	—	—

ԱՌԿԱ	ուսանող	գերազ. (18-20)	լավ (13-17)	բավ. (8-12)	անբավ. (0-8)	չներկ.
Կրիմինալոգիա	9	8	1	-	—	—
Ընդամենը	9	8	1	-	—	—

Ներկայացված ցուցանիշներից հետևում է, որ շրջանավարտների ընդհանուր թվից *«գերազանց»* գնահատական է ստացել **31,5%**-ը, *«լավ»*՝ **44,7%**-ը, *«բավարար»*՝ **23,6%**-ը, իսկ *«անբավարար»* գնահատական ստացողներ և պաշտպանությանը չներկայացածներ **չեն արձանագրվել**:

Մասնավորապես, *«Քրեական իրավունք»* առարկայից *առկա ուսուցմամբ* չորս շրջանավարտներից մեկը գնահատվել է <<19>>, մեկը՝ <<16>>, մեկը՝ <<15>>, մեկը՝ <<13>> միավոր, իսկ *հեռակա ուսուցմամբ* տասնմեկ շրջանավարտներից <<18>> միավոր ստացել է մեկ ուսանող, <<17>>՝ մեկը, <<16>>՝ մեկը, <<14>>՝ երկուսը, <<13>>՝ մեկը, <<12>>՝ մեկը, <<9>>՝ երկուսը, <<8>>՝ երկուսը: Հետևաբար, տվյալ առարկայից *միջին հավասարակշռված թվաբանական գնահատականը կազմել է 15,75 միավոր առկա և 12,54՝ հեռակա ուսուցման բաժնում*:

«Քրեական դատավարություն» առարկայից *առկա ուսուցմամբ* հինգ շրջանավարտներից մեկը գնահատվել է <<20>> միավոր, մեկը՝ <<16>>, երեքը՝ <<15>>: *Հեռակա ուսուցմամբ* ինը շրջանավարտներից մեկը գնահատվել է <<19>> միավոր, մեկը՝ <<15>>, երկուսը՝ <<14>>, մեկը՝ <<13>>, երեքը՝ <<12>>, մեկը՝ <<10>>: Հետևաբար, տվյալ առարկայից *միջին հավասարակշռված թվաբանական գնահատականը կազմել է 17,00 միավոր առկա և 13,4՝ հեռակա ուսուցման բաժնում*:

«Կրիմինալոգիա» մագիստրոսական ծրագրով ընդհանուր թվով ինը շրջանավարտներից (3-ը՝ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետից) մեկ շրջանավարտ գնահատվել է <<20>>, հինգը՝ <<19>>, երկուսը՝ <<18>>, մեկը՝ <<13>> միավոր: Նշված մասնագիտացման պարագայում *միջին հավասարակշռված թվաբանական գնահատականը կազմել է 18,22 միավոր*:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ համապատասխան ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների և շրջանավարտների կողմից բարեխիղճ աշխատանք է կատարվել ինչպես մագիստրոսական թեզերի պատրաստման, այնպես էլ հրապարակային պաշտպանությանը նախապատրաստվելու ուղղությամբ:

Հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ նշված աշխատանքներից շատերում արտացոլված էին մագիստրանտների սեփական հետազոտությունների արդյունքները և դրանց հիման վրա առաջ քաշված ինքնատիպ եզրահանգումներն ու գործող օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն

ուղղված առաջարկությունները: Բացի այդ, հասկապես բարձր գնահատականներ ստացած շրջանավարտները քաջատեղյակ էին ոչ միայն գործող օրենսդրական ակտերում առկա իրավակարգավորումներից, այլև իրավակիրառ պրակտիկայում գոյություն ունեցող վիճահարույց, տարակարծիք մեկնաբանությունների տեղիք տվող խնդիրներից և շրջանառության մեջ դրված համապատասխան օրինագծերից:

Հարկ է նշել նաև, որ մագիստրոսական թեզերի գրեթե բոլոր հեղինակները տիրապետում էին նյութին և, որպես կանոն, կարողանում էին ոչ միայն առանց գրավոր տեքստի ներկայացնել իրենց աշխատանքում տեղ գտած հիմնադրույթները, այլև՝ հիմնականում սպառիչ պատասխաններ տալ քննական հանձնաժողովի անդամների կողմից առաջադրված հարցերին:

Մինևույն ժամանակ, թեզերի վերաբերյալ ինչպես գիտական ղեկավարների կարծիքները, այնպես էլ գրախոսականները լիովին համապատասխանում էին ներկայացվող պահանջներին: Այդ առումով, սակայն, որոշակի մտահոգության տեղիք է տալիս այն հանգամանքը, որ գրախոսականներում հաճախ նշված էին նաև տեխնիկական բնույթի թերություններն ու բացթողումները, ինչը պետք է անպայմանորեն հաշվի առնվի համապատասխան ամբիոնների և ղեկավարների աշխատանքները հետազայում կազմակերպելիս:

Մտահոգության տեղիք է տալիս նաև աշխատանքների մեծ մասում իրավակիրառ պրակտիկայի նյութերի և դրանց վերլուծության արդյունքների պակասը: Լավագույն դեպքում մագիստրանտները գլխավորապես օգտվել էին ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներից: Ընդ որում, առավել հաճախ բավարարվել էին պարզապես դրանք վկայակոչելով կամ մեջբերելով: Մինչդեռ, առավել ցանկալի կլիներ, եթե դրանք մանրամասն վերլուծվեին, այդ թվում՝ քննադատական մոտեցման դիրքերից՝ անդրադառնալով այդ որոշումներում տեղ գտած վիճահարույց և ոչ միանշանակ ընկալվող դիրքորոշումներին:

Այդ առումով, թերևս, նպատակահարմար է պայմաններ ստեղծել, որպեսզի մագիստրանտները ոչ միայն հնարավորություն ունենան ծանոթանալու թեզի թեմային առնչվող պրակտիկ նյութերին, այլև պարտադիր անդրադառնան դրանց վերլուծությանը: Նման պայմաններ ստեղծելու տեսանկյունից, կարծում եմ, անելիք ունեն հասկապես գիտական ղեկավարները:

Ամփոփելով վերը քննարկված հանգամանքները՝ կարելի է եզրակացնել, որ քննական հանձնաժողովին հաջողվեց ձևավորել պատշաճ քննական մթնոլորտ և իրականացնել իր հիմնական գործառույթները:

Հատկապես հարկ է կարևորել այն հանգամանքը, որ թեզերի և դրանց պաշտպանության գնահատումներն իրականացվել են հանձնաժողովի բոլոր անդամների, ինչպես նաև ղեկավարների ու գրախոսողների կարծիքները հաշվի առնելով՝ կոնսենսուսի եղանակով և ի օգուտ շրջանավարտի: Ուշագրավ է, որ նրանցից յուրաքանչյուրի կողմից նշանակված գնահատականների միջև էական շեղումներ չկային: Հավանաբար, հենց դրանով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ շրջանավարտների կողմից որևէ դժգոհություն (համենայն դեպս՝ նկատելի) չի եղել:

**Պետական քննական
հանձնաժողովի նախագահ**

Ս. Առաքելյան

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ
ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

2019թ. փետրվարի 1-ին տեղի ունեցավ ամբիոնի «Եվրոպական և միջազգային իրավունք» մասնագիտացման մագիստրոսական թեզերի պաշտպանությունը:

«Եվրոպական և միջազգային իրավունք» մասնագիտացման շրջանակներում պաշտպանության ներկայացվեց 19 մագիստրոսական թեզ, որոնցից 17-ը՝ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի մագիստրանտների և 2-ը՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրանտների կողմից: Պաշտպանության ներկայացված 19 մագիստրոսական թեզերից 17-ը արժանացան «զերպանց» գնահատականի, 1-ը՝ լավ, իսկ 1-ը՝ «բավարար» գնահատականի:

Ընդհանուր բնույթի եզրահանգումներ

«Եվրոպական և միջազգային իրավունք» մագիստրոսական թեզերի պաշտպանության ժամանակ հաշվի են առնվել ներկա աշխարհաքաղական զարգացումները և այն գլոբալ մարտահրավերները, որոնց իրավական կարգավորումները միջազգային իրավունքի կողմից հրամայական պահանջ են հանդիսանում:

«Եվրոպական և միջազգային իրավունք» մագիստրոսական թեզերի պաշտպանության ժամանակ հաշվի են առնվել ներկա աշխարհաքաղական զարգացումները և այն գլոբալ մարտահրավերները, որոնց իրավական կարգավորումները միջազգային իրավունքի կողմից հրամայական պահանջ են հանդիսանում:

«Եվրոպական և միջազգային իրավունք» մագիստրոսական թեզերի պաշտպանության ժամանակ հաշվի են առնվել ներկա աշխարհաքաղական զարգացումները և այն գլոբալ մարտահրավերները, որոնց իրավական կարգավորումները միջազգային իրավունքի կողմից հրամայական պահանջ են հանդիսանում:

«Եվրոպական և միջազգային իրավունք» մագիստրոսական թեզերի պաշտպանության ժամանակ հաշվի են առնվել ներկա աշխարհաքաղական զարգացումները և այն գլոբալ մարտահրավերները, որոնց իրավական կարգավորումները միջազգային իրավունքի կողմից հրամայական պահանջ են հանդիսանում:

պետք է իրականացվի ավելի արդյունավետ ձևով, պետք է վստահ լինել, որ եթե նույնիսկ մագիստրը ինքը անձամբ աշխատանքը չի գրել, այդուհանդերձ նյութին տիրապետում է և կարող հրապարակային պաշտպանության ժամանակ ներկայացնել իր աշխատանքը:

Կարելի է վստահաբար պնդել, որ պ³Բ³ի³ա³Յ³á³ó³Á³Ū³Յ³ Յ³»³ñ³Ū³ó³í³í³ Á³»³½³»³ñ³Á³ Ñ³Ū³á³í³ó³É³Յ³á³ó³Ū³ »Յ³ .Շ³í³Ū³Յ³ Ñ³»³í³½³á³í³á³ó³Á³Ū³á³ó³Յ³»³ñ³Շ³Յ³ Յ³»³ñ³Ū³ó³í³á³Ō³ á³Ñ³Յ³չ³Յ³»³ñ³Շ³Յ³ ..
í³»³ñ³»³ñ³í³á³ó³Ū³ »Յ³ ավարտական ³Բ³É³í³Յ³ն³Յ³»³ñ³Շ³ó:

*Պետական քննական հանձնաժողովի նախագահ,
Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր.
ԵՊՄՀ իրավագիտության դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի վարիչ*

Վ. Հովհաննիսյան

04.02.2019թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի առկա ուսուցման քաղաքացիական իրավունք և դատավարություն մասնագիտացման, գործարարական իրավունք մասնագիտացման, ինչպես նաև հեռակա ուսուցման քաղաքացիական իրավունք և դատավարություն մասնագիտացման մագիստրոսական ծրագրի 2019 թվականի մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների վերաբերյալ

Ամփոփելով սույն թվականի հունվարի 29-31-ն ընկած ժամանակահատվածում Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի առկա ուսուցման քաղաքացիական իրավունք և դատավարություն մասնագիտացման, գործարարական իրավունք մասնագիտացման, ինչպես նաև հեռակա ուսուցման քաղաքացիական իրավունք և դատավարություն մասնագիտացման մագիստրոսական ծրագրի 2019 թվականի մագիստրոսական թեզերի պաշտպանության գործընթացը՝ նախ ներկայացնեմ արձանագրված ցուցանիշները.

Առկա ուսուցում

<i>Մագիստրոսական թեզ</i>	ուսանող	գերազանց	լավ	բավարար	անբավ.	չի ներկ.
<i>Քաղաքացիական իրավունք և դատավարություն</i>	16	8	8	-	-	-
<i>Գործարարական իրավունք</i>	13	1	10	1	1	-

Հեռակա ուսուցում

<i>Մագիստրոսական թեզ</i>	ուսանող	գերազանց	լավ	բավարար	անբավ.	չի ներկ.
<i>Քաղաքացիական իրավունք և դատավարություն</i>	7	1	2	4	-	-

Ներկայացված վիճակագրական տվյալների համեմատական վերլուծությունը թույլ է տալիս որոշակի եզրահանգումներ անել մագիստրատուրայում առկա և հեռակա ուսուցման գործընթացի արդյունավետության, ուսանողների որակի և առաջադիմության, ինչպես նաև քննաշրջանի կազմակերպչական մի շարք հարցերի վերաբերյալ: Այսպես՝ իրենց պատրաստվածությամբ առանձնացել են մագիստրատուրայի առկա ուսուցման քաղաքացիական իրավունք և դատավարություն մասնագիտացման շրջանավարտները: Նրանք հավասարապես ստացել են գերազանց և լավ գնահատականներ, ինչը բավականին ողջունելի է, քանի որ մագիստրոսի աստիճանի հավակնություններ ունեցող շրջանավարտին ըստ էության հարիր չէ բավարար կամ անբավարար գնահատականը: Քաղաքացիական իրավունք և դատավարություն մասնագիտացման շրջանավարտներին իրենց պատրաստվածությամբ և աշխատանքների որակով զիջում էին գործարարական իրավունք մասնագիտացման մագիստրոսները: Նրանցից միայն մեկն է արժանացել գերազանց գնահատականի, մեկը՝ բավարար, մեկն էլ՝ անբավարար գնահատականի: Ուրախությամբ պետք է նշեմ, որ այս տարի որոշակի առաջընթաց են գրանցել նաև

հեռակա ուսուցման մագիստրոսները: Ի տարբերություն նախորդ տարվա՝ այս տարի մեկ մագիստրոսական թեզի պաշտպանությունն արժանացել է գերազանց գնահատականի, իսկ անբավարար գնահատական ընդհանրապես չի արձանագրվել:

Պետք է նշել, որ ընդհանուր առմամբ մագիստրոսական թեզերի հեղինակները տիրապետում էին նյութին և կարողանում էին ոչ միայն բանավոր ներկայացնել հիմնադրույթները, այլև՝ հիմնականում սպառիչ պատասխաններ տալ առաջադրված հարցերին: Ընդ որում, գոհունակությամբ պետք է փաստել, որ նախորդ քննաշրջանների ամփոփման հաշվետվություններում արված դիտարկումները հաշվի են առնվել և որոշակի առաջընթաց է արձանագրվել: Այդուհանդերձ, կցանկանամ Ձեր ուշադրությունը հրավիրել որոշ խնդրահարույց հարցերի վրա, որոնց լուծումը նպաստելու է քննական գործընթացի բարելավմանը: Այսպես՝

1) Թեև այս անգամ մագիստրոսական թեմաների ընտրությունը որոշ չափով հաջողված էր, քանի որ ուսումնասիրության առարկա էին դարձվել պրակտիկ նշանակություն ունեցող հիմնահարցեր, սակայն կարծում եմ չպետք է նշվածով սահմանափակվել: Նախ անհրաժեշտ է թեմաներն ընտրել առավել նեղ բովանդակությամբ և յուրաքանչյուր տարի թարմացնել դրանց ցանկը: Միաժամանակ պետք է նշել, որ մեր երկրում իրականացված լայնածավալ օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՀՀ իրավական համակարգ ներմուծվել են նյութական և դատավարական որոշ նոր ինստիտուտներ, որոնց տեսական հետազոտությունն ավելի, քան արդիական է: Ուստի թեմաների ընտրությունը հարկ է իրականացնել նաև նշվածի հաշվառմամբ: Միաժամանակ կարծում եմ, որ թեմաների շարքում պետք է ընդլայնել վարչական դատավարության և սնանկության ինստիտուտի խնդրահարույց հարցերը: Թեմաների ընտրության հարցում որպես ուղենիշ կարող են ծառայել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում բարձրացված հարցադրումները:

2) Հարկ է ուշադրություն դարձնել մագիստրոսական թեզերի եզրահանգումներին: Որոշ աշխատանքներում կամ այդպիսիք բացակայում էին, կամ թեև առկա էին, սակայն չունեին որևէ գիտական նշանակություն կամ էլ արդեն իսկ ընդունված օրենքների կամ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների վերաբրտադրությունն էին՝ որպես սեփական եզրահանգումներ:

3) Գրականության ցանկերի խնդիրն այս դեպքում ևս արդիական էր: Հղումներում դեռևս գերակշռում էր խորհրդային ժամանակաշրջանի գրականությունը: Պրակտիկ նյութերի առումով ևս վիճակը նախանձելի չէր. մեծ մասամբ ուսումնասիրության առարկա էին դարձվել ՀՀ վճռաբեկ դատարանի ավելի վաղ շրջանի որոշումներն այն դեպքում, երբ առանցքային նախադեպային նշանակություն ունեցող իրավական դիրքորոշումներ ՀՀ վճռաբեկ դատարանը քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության գծով արտահայտել է հիմնականում վերջին երկու-երեք տարիների ընթացքում կայացված որոշումներում: Աշխատանքների մեծամասնությունում անդրադարձ չկար Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումներին:

Բարձրացված խնդիրների լուծումը, կարծում եմ, հիմնականում վերաբերում է ամբիոնների և գիտական ղեկավարների աշխատանքին: Գիտական ղեկավարները պետք է առավել հետևողական լինեն, հնարավորինս խիստ վերահսկողություն սահմանեն թեզերի պատրաստման գործընթացի նկատմամբ, իսկ ամբիոնները չթուլատրեն սահմանված չափանիշներին չհամապատասխանող աշխատանքների պաշտպանությունը:

Անդրադառնալով գրախոսողների աշխատանքին՝ նշեմ, որ վերջիններս, ի տարբերություն նախորդ քննաշրջանների, աշխատանքի վերաբերյալ իրենց կարծիքը ներկայացնելիս առավել առարկայական և իրական էին մատուցում գրախոսվող նյութը, ինչն, անշուշտ, ողջունելի է:

Այս ամենով հանդերձ⁹ պետք է նշեմ, որ մագիստրոսական թեզերի պաշտպանության գործընթացն ընդհանուր առմամբ անցել է բնականոն քննական մթնոլորտում, իսկ բարձրացված հարցադրումները բացառապես նպատակաուղղված են գործընթացի հետագա արդյունավետության բարձրացմանը:

«Ի՞նչ է Ի՞նչ և Ի՞նչ է Ն՞ույն Ն՞ույն Թ՞եզի Կ՞արգ Ն՞ույն Դ՞պք»

Ե. Խունդկարյան